ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի մարտի 13-14-ը

Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**
   Տիգրան Խաչատրյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2019 թվականի մարտի 13-14-ը:
4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրասիական տնտեսական հանձնաժողով:
5. **Գործուղման նպատակը**
   Մասնակցություն ԵԱՏՄ անդամ պետությունների արդյունաբերության նախարարների հանդիպմանը:
6. **Քննարկված թեմաները**
   Արդյունաբերության ոլորտում համագործակցության զարգացմանն ուղղված առաջարկությունների քննարկում, մասնավորապես՝ արդյունաբերական կոոպերացիայի զարգացում, ներմուծման փոխարինում, կոոպերացիայի, սուբկոնտրակտացիայի և տեխնոլոգիաների փոխոնցման թվային հարթակի ներդրում, արդյունաբերական քաղաքականության խորհրդի ստեղծման ընթացակարգային փաստաթղթերի ընդունում:
7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**
   ՌԴ ներմուծման փոխարինման ծրագրին ԵԱՏՄ անդամ երկրների մասնակցության հնարավորություններ, միասնական արդյունաբերական քաղաքականության իրականացման նպատակահարմարություն, գյուղատնտեսական և ճանապարհաշինական տեխնիկայի արտադրության ոլորտում անդամ պետությունների կոոպերոցիոն համագործակցություն, անդամ պետությունների մասնակցություն ՌԴ պետական թվային տեղեկատվության համակարգին, ԵԱՏՄ արդյունաբերական քաղաքականության խորհրդի ստեղծման նպատակահարմարություն:
8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը**
   Հանդիպման ընթացքում ստորագրվել է համապատասխան արձանագրություն: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել աշխատանքներն՝ ուղղված արդյունաբերական համագործակցության զարգացմանը:
9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**
   Առաջարկվել է կազմել ԵԱՏՄ անդամ պետությունների արդյունաբերական կոոպերացիոն նախագծերի քարտեզ, արդյունաբերությունում միասնական թվային պլատֆորմի ձևավորման աշխատանքների իրականացում, օգտվելով ՌԴ պլատֆորմի ներուժից, արդյունաբերական քաղաքականության խորհրդի ստեղծման իրավական ակտերի նախագծերը ԵՏՀ Կոլեգիայի նիստին քննարկում:
10. **Գործուղվողը**

Տիգրան Խաչատրյան _____

18.03.2019թ.